

ԲԱԺԱՆՈՐԳԱԳԻՆ

Պուլկարիոյ համար

Տարեկան ֆրք. 10


Վեցամսեայ " 5

Արտասահման

Տարեկան ֆրք. 12

Վեցամսեայ " 6

ԿԱՆԽԻԿ



Գրութիւնք եւ չին
տրուիր:

Հասցե

DIRAN PAPAZIAN

RUE DRAGOMAN

K. STEPAN

BULGARIE) VARNA

ՇԱԲԱԹԱՀԱՆԴԵՍ. ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱԽԵԾՏԱԿԱՆ

Եթէ կ'ոգե՛ք «Հայենի»-ին մէջ աղօրք երեւնալ,

Պարտիք սիրուն եւ ազնիւ՝ դէմք մը ունենալ:

ԱԶԳԱՅԻՆ

Վանայ այցելու հովիւ Տ. Ներսէս եպիսկ. Ասլանեան հեռագրած է Պատրիարքարան, թէ գաւառին մէջ գըտնուող 39 հայ բանտարկեալներէն մինչեւ հիմա 33ը կայսերական ներման արժանանալով ազատ արձակուեր են:

— Կայսերական իրաւոյ մը Պատական նախարարութեան կը հրամայէ Կիլիկիոյ կաթողիկոսական ընտրութեան կատարմանը համար հարկ եղած հրամանագիրները յանձնել Պատրիարքարանին: Այդ պաշտօնագիրները կը վերաբերին Երուսաղէմի լուսարարապետ Տ. Սահակ եպիսկ. Խապայեանի պաշտօնին վաւերացման իբրեւ հսկող Կիլիկիոյ կաթողիկոսական ընտրութեան: Սահակ եպիսկոպոս անմիջապէս Ատանա երթալով ընտրական գործողութեանց պիտի ձեռնարկէ: Այս գործողութեանց ներկայ պիտի գտնուի Իստոկան նախարարութեան կրօնական գործոց տեսուչի օգնական Պէհա պէյ:

— Այս անգամ ներման արժանացած 51 հայ բանտարկեալներու 39ը Վանէն, 10ը Արաբկիւրէն, 1ը Սեփաստիայէն և 1ն ալ Տրապիզոնէն է:

— Վանայ, Բաղէշի, Տիգրանաւերտի և Խարբերդի նահանգներուն մէջ հունձքերուն նուազութեան և երաշտութեան վրայ Պատրիարքարանը կոչում կընէ Ազգին գթասիրական զգացումներուն, իրենց կարօտ եղբայրներուն օգնելու համար:

— Օտէսայէն կը գրեն «Արմէնիա»-ի թէ, Սինֆէրէպօլ քաղաքի պատժական առեանը անպարտ արձակել է Գրիգոր Գուլգուլեան անուն թրքահպատակ հայ մը, ուր քանի մը ամիս առաջ նոյն քաղաքին մէջ դաշոյնով սպանել էր Հասան անունով վաշխառու մը: Այս վերջինը կոտորածներու պատճառաւ Ռուսիա դադարող հայերու մէկ քանիներէն իր առնելիքները դանձելու համար հոն դացած էր: Գրիգոր վիաներով կը հաստատէ թէ ինքը պատուաւոր անձ մ'է և այդ Հասանը Հայկական կոտորածի ժամանակ իւր ձեռքովը սպաններ էր Գրիգորի հայրն ու եղբայրը. ասոր վերայ երգուեալ դատաւորք միաձայնութեամբ Գրիգորի անպարտութիւնը կը լծուեն:

— Անատոլիոյ նահանգաց ընդհանուր քննիչ Շաքիր փաշա՝ անցեալ ուրբաթ օր Սինոպի մէջ օրտի կաթուածէ մեռեր է:

— Սպարապետութեան, ծովային պաշտօնատան եւ թնդանօթարանի վերատեսչութեանց հրահանգ տրուեր է, որ պէս զի հայ տարագրեալներու անդանձելի մնացած յետեալ դրամները դանձուին և ղրկուին :

— Այս տարի Կ. Պոլսոյ ազգային վարժարանները տուած են ընդ ամենը 15 շրջանաւարտներ, որոնց 13ը աղջիկ եւ 2ը մանչ :

— Գարակէօղեանի կտակով Եէտի—Գուլէի մէջ շինուելիք Որբանոցին հրամանը Պատրիարքարան հասած ըլլալով, հարկ եղած պաշտօնական ձեւակերպութիւններու փութացման հրահանգներն ալ տրուած են առ որ անկ է :

— Կովկասի թերթերը կը ծանուցանեն թէ Յովհաննէս Այվազովսքի մտադիր է իր ծովանկարներուն մնայուն ցուցահանդէս մը կազմակերպել Եալթայի մէջ :

Ժամհախսին դեղը. — Հնդիկ բժիշկ մը կըսէ թէ Ծայրագոյն Արեւելի մէջ ատենօք ձէթը կը գործածեն եղեր իբրեւ դեղ ժանտախտին դէմ: Աղեքսանդրիոյ մէջ պատահած ժանտախտին ատեն փորձով տեսնուեր է թէ ձէթի վաճառական երը կամ ձէթով գործ ընողները ժանտախտէ չեն վաշակուիր :

Լոնտոն 22 Հոկ.

Տըվընբօրդի (անգլիա) մէջ մեծ պատուատու թիւններ կը տեսնուին չուտով սպառազինելու նոր նաւաբաժին մը, որ պիտի բաղկանայ առաջին կարգի չորս յաճախորդներէ: Այս նաւաբաժինն երթալիք տեղը դաշտի կը պահուի :

(Արդեօք ո՞ր երկիրը կու տալու պիտի երթայ այս նաւաբաժինը):

ՏԵՂԱԿԱՆ

ԱԶԳԱՊԱՏԿԱՆ ԱՂԲԻՐԸ

Անցեալները քաղաքիս մէկ կարեւոր պողոտային վրայ գտնուած ազգապատկան աղբւրը թիւրիմացութեան մը արդիւնքով թաղապետական պաշտօնէից կողմէ վար առնուած էր : Այժմ ուրախութեամբ կ'աւետենք թէ թաղապետութեան Նախագահ Վսեմ. Տիար Ռանգօֆ, իր ծանուցեալ արարատիրութեամբ թէ՛ աղբւրին նիւթեղէնները ամբողջովին յանձնել տուած է մեր ազգային իշխանութեան և թէ յայտարարած է որ նոյն գետինը կը պատկանի Հայ ազգին, որ ազատ է ուզած ատենը անոր վրայ չէնք մը բարձրացնել :

Վսեմ. Նախագահին սոյն արարագատ որոշումը ազգովին շնորհակալութեան արժանի ըլլալով, շնորհակալութեան արժանի է նաեւ յանուն ազգին սոյն խնդրոյն համար բանակցութեան մտնող անձնաւորութեան ջանքն ու աշխատանքը :

ԸՆԺԵՐՑԱՍԻՐԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Տեղւոյս Ընթերցասիրաց ընկերութեան անդամք վաղը կէս օրէն ետքը ժամը 3ին հըրաւիրուած են ընդհ. ժողով գումարել Սիսակեան վարժարանին մէջ, մէկ քանի կարեւոր անօրէնութեանց համար :

Ընկերութեան կարգ մը անգամները եւ թէ այս անգամ ալ եղած հրաւերին անձամբ չի պատասխանեն, իրաւունք պիտի ունենանք ըսելու թէ անոնք Ընթերցարանի մը հաստատութեանը ցանկացողներէն չեն :

ՊԱՏԱՆԻ ԽԱՂԱՄՈՒՆԵՐ

Կիւմսնեն մեղի թէ կարգ մը պատանիներ սրճարանի մը մէջ հաւաքուելով կը ըզբօսնուն եղեր . . . խաղաժողովեամբ : Ասոնցմէ մէկուն աչքը այն աստիճան դարձեր

է որ, քովը նոտող ընկերոջը գրպանէն քսակը թուղցեր է: Այդ պարոններուն անունները թէպէտև մնդի իմաց տրուած է, բայց առ այժմ՝ զանց ընելով հրապարակել, կը յորդորենք զիրենք որ յօգուտ իրենց ետ դառնան այդ կործանարար ճամբէն:

Կը յուսանք թէ այս զեկոյցին անսայով, չեն ստիպեր զմեզ աւելի ընդարձակ գրելու:

ՆԱՄԱԿ Ի ՄԲԱԳՐՈՒԻԵԱՆ

Ֆիլիպէ 7 Հոկտ. 99

«Կարնոյ մէջ Արամեան Արամ՝ անուն հայու մը նահատակման առթիւ կիրակի օրը տեղւոյս եկեղեցւոյն մէջ հոգեհանգստեան պաշտօն կատարուելու պահուն, առաջին անգամ ըլլալով տեսանք որ հոնգուցելոյն պատկերը ծաղկեայ շրջանակի մը մէջ առած բերին հոգեհանգստի համար կարգացուելիք Աւետարանին քովը գրին: Չենք գիտեր թէ Հայաստանեայց եկեղեցին կը թոյլատրէ՞ որ ֆոթօկրաֆ մը ատենը դրուելով, վրան հոգեհանգստ կատարուի: Այս մասին երբ հազարաձուներէ մէկուն դիտուելով ինչ եղեր է, ատանկ բաները քահանաները գիտեն ըսելով մէջէն ելեր է: Մեր գիտցածը սա է որ Առաքեալներու, մարգարէներու, թագաւորներու, սուրբերու և նահատակներու այն պատկերները որոնք օծուած չեն, եկեղեցւոյ տաճարին մէջ ի տես չեն դրուիր ու անոնց վրայ արարողութիւն չի կատարուիր: (*)

Կը ցաւինք որ Հայաստանեայց եկեղեցւոյ այս տարրական օրէնքը չէ յարգած տեղւոյս քահանան: Թերևս Հռոմէական եկեղեցին արտօնէ այդ բանը, բայց Հայ եկեղեցին ո՛չ. որովհետև լսեցինք թէ այդ ֆոթօկրաֆը դրեալին քով տանող դնողը Հռոմէական տնային է եղեր:

ՍԼԱՔ

(*) Այդ պատկերը եկեղեցիի գաւթին մէջ ներելի էր ի ցոյց դրուելու իսկ Տաճարին էջ՝ երբէք:

Ծ. Խ.

ՀԱՐՑ—ՊԱՏԱՍԻԱՆԻ

Տեսած ես երջանկութիւնը.

— Այո՛, ուրիշներ միայն:

Կատարեալ սէրը ո՞ր կը գտնուի.

— Մօրը ստիներին մօտ:

Կիները ինչո՞ւ կը սիրեն ծաղիկները.

— Որովհետև գիտեն թէ ծաղիկները իրենցմէ շուտ կը թոռմին, ապա թէ ոչ չը պիտի սիրէին:

Մարդիկ ինչո՞ւ կ'ամուսնանան.

— Յետոյ զղջալու համար:

Ի՞նչ է պարը.

— Սիրոյ գիրկնդ խառնում, որով խելքին հետ մեկտեղ միտքն ալ կը դառնայ:

Կանանց իրենց անձին վրայ ունեցած համարումը ե՞րբ կը ցամքի սրտերնուն մէջ.

— Երբ լսեն թէ իրենց թոռանը թոռը զաւակ մըն է ունեցեր:

Կեանքին մէջ ո՞վ է բաղդաւորը.

— Նա՛ որ ծնած օրը մեռաւ:

Ամաթոշակին անվճար մնացող ուսուցիչները ինչ կ'ընեն.

— Բերանին փորեալին կը բանան:

Արդի երիտասարդները ի՞նչ նորութիւն կը փնտռեն աղջիկներուն վրայ.

— Կարմրուկ ոսկիով լեցուն ապրանք մը, քիչալը թանկի եփելու, գետինը մաշխով ու պատերը կիրով սրբալաւ իշ ընելու բարեմասնութիւնները:

Արդի օրիորդները ի՞նչ նորութիւն կը փնտռեն երիտասարդներուն վրայ.

— Բայքօնը դուռը. աշճին խոհանոցը ու սպասուհին բարե բանած՝ մատամին դէմը կեցնել տալու կարողութիւնը ունենալ:

Բո՞ժ. — Երկու կողմին ալ խորհուրդ կուտանք որ, ատանկ ֆէյէքիտներ գտնան նէ՛ աման ձեռքէ չի փախցունեն:

ԹՈՒԹԱԿ

Կը խնդրուի ամէն անոնցմէ որ անցեալ տարեշրջանին ծախելու համար մեզմէ առած դպրոցական գիրքերէն տալիքներն մընացած է, այլ ևս վճարեն, հակառակ պարագային պէտք եղածը պիտի կատարենք:

Ա. ԶԱՐԳԱՆԵԼԻԱՆ

Գրաւաճառ ի Վառնա

ԶԱՆԱԶԱՆՔ

Կնոջական անձնություններ. — Գլխաւոր թէ ֆրանսա ըմբռնական պատուիրակութիւն մը զրկած է բորթուկալ, ժանտախտին վիճակը ուսումնասիրելու համար և եթէ այդ պատուիրակութեան գլուխը կը գտնուի Տօրթ. ֆալմէթ, Լիլի Բասդէօնեան հաստատութեան տնօրէնը: Օբորթոյի լրագիրները կը պատմեն թէ այդ բժիշկին կինը, որ իր ամուսին կ'ընկերանայ, սեպտ. 21ին Պոնֆէնի հիւանդանոցը գացեր է ուր կը դարձանուն ժանտախտաւորները: Տիկին ֆալմէթ, ապանեխման յատուկ կանոնաւոր պըլուզը հագնելէ ետքը, Տօրթ. Նովէյրաի հետ այցելեր է բոլոր սրահները, մօտենալով հիւանդներուն, խօսակցելով զանոնք զարմանող անձնուէր հիւանդապահուհիներուն հետ, և զրամական համեստ նուէրներ տուէր է իւրաքանչիւրին, ֆրանսական եռագոյն ժապաւէններով կապուած պահարաններու մէջ: Քաջարի ֆրանսուհին իրեն ընկերացող բժիշկին պատմել տուեր է ամէն մէկ հիւանդին պատմութիւնը եւ խնդրեր է որ իր միտքաւորական խօսքերը թարգմանէ անոնց: Տիկին ֆալմէթ միակ կինն է որ Օբորթոյի մէջ ժանտախտ ծագելէն ի վեր Պոնֆէնի հիւանդանոցը մտնելու արիութիւնը ունեցած ըլլայ. իր այցելութիւնը շատ յուզիչ ապաւորութիւն մը թողուցեր է խեղճ ժանտախտաւորներուն վրայ: Իրմէ առաջ, քաղքին երէցը միայն գացած էր զրամական նպաստ բաշխելու աղքատ հիւանդներուն:

— Առեւտրական Տեղեկութիւն մը որ մասնաւորապէս գեղեցիկ սեռը կը հետաքրքրէ:

1898ին, ֆրանսա արտածած է 194,038 սեղմիրան (forux) որոնց 47,675ը Անգլիա, 24,758ը Պէլճիքա, 51,398ը Զուիգերիա, 28,072ը Ամերիկա զրկուած և 42,135ը ուրիշ երկիրներ: Նորաձեւութեանց առարկաներն ալ ոչ նուազ կարեւոր տեղ մը

կը գրաւեն ֆրանսայի արտածութեանց մէջ որոնց գումարը կը հասնի 39,784,123 ֆրանքի: Ըսոնց մեծագոյն մասը, 34 միլիոն արժողութեամբ, կը գնէ Անգլիա. յետոյ կուգան Գերմանիա և Պէլճիքա՝ մէկը 2 միլիոն 279,102 ֆր. և միւսը 2,066,425 ֆր. արժողութեամբ գնումներով: Գալով արուեստական ծաղիկներուն, զորս Բարիդի գործաւորուհիները այնքան լաւ գիտեն պատրաստել, 1898ին, անոնցմէ արտածուած է 22,665,403 ֆր. ի: Այդ ճիւղին մէջ ալ, ֆրանսայի առաջին յաճախորդն է Անգլիա որ գնած է 14,226,520 ֆր. ի, իսկ իրմէ անմիջապէս ետքը կուգան Միացեալ Նահանգները որոնք Գերմանիայէն ու եւրոպական ուրիշ երկիրներէ աւելի կը գնահատեն ֆրանսայի արուեստական ծաղիկները:

Իրական տուաւ. — Նիւ Եորքի թատրոններէն մէկուն բեմին վրայ իրական տուած մը տեղի ունեցեր է, Շէքսպիրի մէկ թատերախաղին ներկայացմանը առթիւ, որ ողբերգական վերջաւորութիւն մը ունեցեր է: Գլխաւոր դերասանուհին, Օր. Ժիւլիա Մօրիսն, որ իր արուեստակից երիտասարդներէն Լէյտէնի դէմ տանելութիւն մը կը զգար, ներկայացման միջոցին բեմովէրի շուրջ հարուած պարպեր է անոր վրայ:

ՔՍԱԿԱՀԱՏԻ ՄԸ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆԸ

Եգիպտոսի մէջ քսակահատ մը ձերբակալուելով ոստիկանապետին ներկայութեան հետեւեալ կերպով խոստովաներ է իւր յանցանաց շարքը:

«Ես Քէֆալոնիայի Յոյն մը եմ, անունս է Անկէլ, արհեստով ալ քսակահատ:

«Քսան տարի է որ աս արհեստը ինչ ըրեր չըրեր սորվեր և ըստ բաւականին կատարեւազործեր եմ, անանկ որ այսօր

եանկէսիձի ալ ըսեն նէ կը վայլէ մինչև անգամ ալ ձեռքիս բթամատը երկու տարի առաջ կտրեցի նետեցի, սա պատճառաւ որ փոքրիկ գրպաններու հանգիպած ատենս յժուարութիւն չի կրեմ, որովհետեւ, մեր մեղքէն, լայն վերարկու ու մեծ գրպան ունեցողները հետզհետէ պակսեցան :

Իմ երկրացիներս ամբողջ այս արհեստով կը զբաղէին ասկէջ քսան տարի առաջ և ալէկ ալ կապրէին. այն ատեն ոչ այսչափ բազմամարդութիւն կար, ոչ այսչափ հարուստներ կային և ոչ ալ այսչափ շքեղութիւն. բայց հիմա հարուստը շատ է, ամեն մարդ առ հասարակ հագուած սգուած կը պտտի, բազմութիւնը շատ և մարդիկ քայլ մը տեղը կառքով կամ ձիով կերթան, փոխանակ ոտքով քալելու :

Առաջ փողոցները պանիր հաց և բիսէնի թապլաքեարներէ զատ ուտելիք ծախող չկար, հիմա, երկու քայլիդ մէկին լողանթա մը կը տեսնաս ուր կը յաճախէ շաքար թոշ 30 շրջ վաստիկ աշկերտն ալ : Շիտակը այսչափ յառաջդիմութիւն եղած ատենը զարմանալի չէ՞ մեր արհեստին ու վաստակին վրայ օրէ օր ֆեւսացութիւն կոխելը . այս գործին իմ խելքս չհասաւ : Մանաւանդ սա վերջին քանի մը ամիսը որ ըսէք, գրեթէ ամէն օր պարապ կը պտրտինք, բան չունիս նէ ասոր անոր գրպանը խառնէ պրպտէ ու ոտքի աման հինցոր :

Ո՛ր հարուստին, ո՛ր հագմած սրգոված մարդուն գրպանը ձեռք կը խօթենք, կամ կուտ մը չկայ կամ եղածն ալ իրթիքեապ ընելու մարդ կամչնայ :

Ժամացոյցի գրպանները կը խառնես, կը նայիս որ ելէկին կոճակին անցում չգլթային ծայրը պարապ է. մինակ չգլթան ալ բաներնուս կուգայ ալ նէ, ան ալ ես խամ, ես խաբլամա է :

Քանի մը անգամներ կանանց աշխարհի օգերը դողցանք վրայի քարերը

աղամանդ կարծելով, բայց երբ ծախելու տարինք, ոսկերիչները վրանիս խնդացին, քարերը սրտն է ըսելով : Անոնց էրիկները մեզմէ ճարպիկ են փրկութիւն :

Ասոր վրայ միջոց մը գտնելով, օր մը սեղանաւորի մը ճամէքեանէն 20 ոսկին մէկէն վերուցի, բազդէս ատոնք ալ շինծու ստակներ են եղեր :

Երէկ հարուստին մէկուն գրպանը խառնեցի, 30 բարա միայն ելաւ :

Ալ այս չափէն կընաք մակաբերել թէ՛ որչափ խեղճութեան մէջ ինկեր ենք. կը փնտըռենք կոր այն օրերը, որ այսչափ սխալ և ֆանթազի չկար. որին գրպանը որ ձեռք նետէինք, անպատճառ զայն պարապ չէինք դուրս հաներ, կամ ոսկիով լեցուն քսակ մը և կամ բիրեօլ սահաթ մը կը գտնէինք. հապա փողոցը պտրտող կանանց վիզէն կախուած սիգի սիգի ոսկիները մի կըսես, տղայոց դուխները դուռած աղամանները եւ խոշոր ոսկիները մի կըսես. ատոնց հիշ մէկը չկայ հիմա. իբր թէ պարիթ է եղեր. էն չհաւնած պախալիդ գրպանէն թէֆթէր քէսէսին գողնայինք նէ՛ մէջէն քիչէն քիչ հազար զրուշի պանքնօթ կեւէր : Հէլէ օր մը մտքէս չեւներ, տեսայ որ մէկը գլուխը խոշոր չալմայով ֆէս մը դրած կերթար, հեռուէն վաղելով գլխուն ֆէսը յափշտակելու և փախչելու մէկ եղաւ. և թերեւս չհաւատաք ինձ եթէ ըսեմ թէ, երբոր այդ չալման քակեցի, երկու ֆէս իրարու մէջ դրուած էր եւ արաւըն ալ 12 հատ պանքնող :

Այս պէրէքթները ո՛ր գացին չեմ գիտեր : Առաջ ամէն մարդ զուրուշով կը խօսէր, հիմա ընդհակառակն ոսկիով կը խօսի, բայց ոսկիին անունը կայ ինքը չկայ :

Քօքողութեան առ հասարակ ամէն մարդու վրայ տիրելը մեր հոգը չէ,

մենք դարձեալ մեր օրականը կրնանք
ճարել ալ նէ. դէշը հոն է որ հիմա
հարուստն ու աղքատը որոշելը շատ դժ-
ուար եղաւ, որովհետեւ աղքատն ալ հա-
րուստին հաղածը կը հագնի եւ ամէն
երեւոյթով հարուստէն տարբերութիւն
չունի:

ԵՐԿՈՒ ԶԱՐԵԱՑ ՓՈՔՐԱԿՈՅՆԸ

Աշխոյժ էր Աննիկ, սիրուն ու փափուկ
Բայց հասակաւ էր նա խիստ կարճակ-
Չֆնաղ էր Զապէլ. անոր հակառակ
Թէեւ ինքն ունէր խիստ քաւճար հասակ:

Այս երկուքին մէջ մեր պարոն Գեղամ
կը փարանէր յոյժ փիճակով տարտալ.
Այ ճարք հասած հարցոց նա մի օր
Իրեն ծերունի Դաւիթ կնքահօր:

«Աննիկը սիրեմ, Զապէլը պաշտեմ,
Ասոնց երկուքէն ես ո՞րը ընտրեմ...»
Մօրմբ մեռի առաւ Դաւիթ ու երկար
Մտածելէ վերջ՝ ըսաւ ծանրաբար:

«Անշուշտ դու կըրբաս զոն ու երջանիկ
Թէ որ հարս առնես աշխոյժն Աննիկ.
Պէտք է հետեւիս խօսքին իմաստնոյն
Ընտրելու երկուց յարեաց փոքրագոյն»:

Մ.

ԵՐԲՈՐ ԶՈՒԿԸ ԾԱՌԸ ԵԼԼԱՅ.

Բարենորոգումները այն ատեն պի-
տի գործադրուին:

Կուսակցութիւնները իրարու լեզ-
ուէ պիտի հասկնան:

Հացի կուիւր այն ատեն պիտի վեր-
ջանայ:

Վառնաի եկեղեցին տեական թա-
ղական խորհուրդ մը պիտի ունենայ:

Պուլկարահայ վարժարաններէն չը-
ջանաւարտ աշակերտ պիտի ելլայ:

Հարս ու կեսուր իրարու հետ սի-
րով պիտի վարուին:

Մեր օրիորդները պարզասէր պիտի
լլան:

Մեր երիտասարդները խոհական
պիտի ըլլան:

Առաւ փախաւութիւնը աշխարհ-
քէն պիտի վերնայ:

Մարդիկ ուղղութեան եւ անկեղ-
ծութեան պիտի հետեւին:

Ընտանիքներու մէջ համերաշխու-
թիւնը տեական պիտի ըլլայ:

Բարեկամութիւնը մշտապէս պիտի
լլայ:

Զրիաճարակութեամբ թերթ կար-
դացողը այն ատեն պիտի ամչնայ՝ եր-
բոր ձուկը ծառը ելլայ:

«Զինաստանի հայաբնակ բաղաբի մը վար-
ժարանի ուսուցիչներէ մին այս վերջերս ըս-
կսեր է իշխարաքանակաւ սիրահարու-
թիւններ ընել գտնուած դպրոցին վարժուհի-
ներէ մէկուն հետ, ու տեսնելով որ գործը
յայտնուելու վիճակին մէջ է, բաւարարե-
ալ տալով մնալու համար կ'որոշէ ի ցոյցս մարդ-
կան խօսք-կապ մը տալով «նշանուած» հըո-
չակուիլ. բայց որովհետեւ պիտե՞ն չի ներեր
եղեր այդ խօսք կապը գնելու, ուստի կ'որո-
շեն որ օրիորդը քե՛ս թէ՛ս իր կու ոսկիի
փոխառութիւն մը ընելով՝ զայն սիրահարին
ձեռքը գնէ, որպէս զի երթայ պիտե՛ն իր
առնէ և «Զբոյս ի բոյոց բեղ մատուցանեմ»
ըսելով, իրեն (օրիորդին) պաշտօնապէս խօսք
կապ ? ? ? տանի:

Զինաստանի վարժարանաց հոգաբար-
ձութիւններուն աւագ պարտաւորութիւնն է
այսուհետեւ աշքերնին չորս բանալ և իրենց
տրամադրութեան տակ աշխատող վարժապետ
ու վարժուհիներուն վրայ խիստ հսկողութիւն
մը ի գործ դնել, որպէս զի անոնց խնամոցը

յանձնուած ուսանողք և ուսանողուհիք օրինակ չառնեն այն տարիքէն սիրաբանութեան սկսելու :

ԼԻՆԿ—ԼՈՒՆԿ

ԳԵՂԵՑԻԿ ՊԱՏԱՍԽԱՆ ՄԸ

Անցեալները Ամերիկայի մէջ պատահած երկաթուղիի արկածի մը զոհ կերթայ զործաւոր մը, որուն կնոջը իբր փոխարինութիւն ընկերութիւնը տաւ հազար ֆրանք կը վճարէ : Դեռատի այրին քանի մը օրէն ետքը իմանալով որ նոյն արկածէն ճամբորդի մը մէկ ոտքը կտորած ըլլալուն համար երկաթուղոյ ընկերութիւնը ի փոխարէն 20.000 ֆրանք տուած է անոր, կը բարկանայ, և շունչը ընկերութեան վերատեսուչին գրասենեակը կառնէ :

— Պարոն, կըսէ վշտացեալ ձայնիւ, կտորած մէկ ոտքի փոխարէն երբ քան հազար ֆրանք կը վճարէք, ինչո՞ւ ինծի տաւ հազար ֆրանք տալով կը բաւականանաք, ինծի՞ որ ամուսինս բոլորովին կորուսի, միթէ արդարութիւն է այս :

Վերատեսուչը.— Տիկին, շատ գիւրին է ասոր պատճառն հասկնալ. այն խեղճ մարդը 20 հազար ֆրանք առնելովն հանգերձ չի կրնար նորէն բնական ոտքի մը տէր ըլլալ, բայց դուք 10 հազար ֆրանքով հաւանական է որ առաջինէն ա՛լ աւելի յարմար ամուսին մը կրնաք առնուլ :

Այս պատասխանին վրայ տիկինը, որ գեռատի և գեղեցիկ էր կը կարմրի բայց ներքնապէս ուրախութիւն ղգալով տեսչին քովէն կը հեռանայ :

Իւշ տէֆա էվլէնմիշ վէ ինչ տէֆա—
«ընտա տա ալաւըր դարըր էօլմիւշ օ-

լան զէնկին սիր թաշրալըյա՝ ահպապտան պիրի տէօրտիւնճիւ տէֆա օլարադ էվլէնմէք թէքլիֆ իտէր :

— Պու. թէխիֆինիլի կիւլէրէիս զապուլ իտէրիմ հաթ Ղապապիթ աղա, ճէվապ վէրիւր թաշրալը, հաթտա թըրախօմա պիլէ թալէպ իթմէմ. անճախ շու շարթ ըլա քի՝ ալաճաղըմըզ գատըն էօլմէյէճէզինէ տայիր պանղա պիր մէօթէպէր քէֆիլ կէօթէրմէլի . . . :

Թիւթիւն օթլագճըլարընտան պիրի կէչէն կիւն ահպապընտան պիրինէ շէօյլէ տէմիշ :

— Միւսիւ, սիզ հաղըր սիկարա գուլանըրընըզ. պիր թանէ վէրինիզ պանա :

— Թիւթիւնիւ թէրք էթտիմ, գուլանմայօրմ :

— Գուլանմայօրմըն՝ . . . օ նիչին եա :

— Տօղրուսունու իսթէ՞րմիսին, սէնի պու թապլիյէթինտէն ֆէրաղաթ կէթիւրմէք իչիւն :

— Վա՛յ Տիրատուր աղա, սի՛ղտէ մի քէօմիւրճիւլիյէ պաշլատընըզ. աննառմ, գըշ կէլտի եա՛, քէօմիւրճիւլիւք արթըզ բարա իտէր :

— Խայըր պիրատէր. օնտան տէյիլ, րահմէթլի բէտէրին սօն լուրատը պու իտի տէ . . .

— Աճայիպ՝ . . . մութլագ քէօմիւրճիւ օլ տէյի վասիյէթ մի էթտի :

— Խայըր սմա, պանա հէր վագըթ «թօիրագ թութասըն ալթուն քէսիլսին» տէր իտի :



Մահճուպիշերին միախաճարք

Գովէտի պիւր բերտէ

Բօսթա իւճրէթի պիզէ այիտ օլարադ

Փիյ 20 սանթիմ:

Թէ ազգային թատերաստներ և
 թէ եւրոպական լեզուներէ հայերէնի
 թարգմանում տպեալ կամ անտիպ թա-
 տրերգութիւններու կատակերգութիւն-
 ներու պէտք ունեցողները գիմելու են
 խմբագրութեանս:

Մ. Զ.

ԹՈԹՈՎՍՈՒՆՔ

Գողտրիկ բանաստեղծութեանց սոյն հա-
 տորիկէ կը վաճառի ի գին 25 սանդիմ, և
 Զարպէտեանի գրատունը, Վարնա:

ՀՈՅՑ ՏԵՍԱԻ

Տիար Յ. Կ. Պօնճուգեանի պատկե-
 րազարդ. Բնական — Ընթերցարանը:
 Գին 60 սանդիմ. վարժարանաց համար
 100/ն 15 զեղջ:

Դիմել սա հասցեով

J. G. BONDJOUKIAN VARNA

Ե Ր Կ Ա Ր Ա Ր Ը

Կա՛մ

Մեղի և Ապաշառ

Պոլսական կեանքէ բաղում

Թատերաստ 5 արար և 1 պատկեր.

Գին 60 սանթիմ: Դիմել խմբագրութեան:

ՄԵԾ ՎԻՃՈՎԱԿԱՆ ՀՈՒԹԻՒՆ

ՍՕՖԻԱ ՔԱՂԱՔԻ



ՊՈՒԼԻՍԱՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՆԷՆ

Երաշխատրեալ

Ս. ՊԱՐԳԵԻՆ Է 500.000 ՖՐ. ՈՍԿԻ
 50.000 տոմսեր հրապարակ հանում
 են, որոնց 25.000ը պիտի շահին հե-
 տեւեալ կարգաւ:

1899 Յունիս	9ին	1500	Թիւեր.
" Յուլիս	7	1500	"
" Օգոստ.	4-5	2000	"
" Սեպտ.	3-4	"	"
" "	23-24	"	"
" Հոկտ.	13-31	16,000	"

Մէկ տիւրք.

1, 25 Ֆ.	
2, 50	
3, 50	
3, 15	
2, 15	
14, 40	

Գիներն են ՈՍԿԻ ՖՐ.

Փառօրդ

2, 50 Ֆ.	
4	
5	
7	
6	
4, 30	
28, 80	

Կէս

5 Ֆ.	
8	
10	
14	
12	
8, 60	
57, 60	

Ս. մ. բոլ

10 Ֆ.	
16	
20	
28	
24	
17, 20	
115, 20	

Տրջակայ քաղաքներէն եկած յանձ-
 նարարութիւնք փութով կը կատարուին:

Ծ. Ա. կարգէն չի սկսող մը եթէ
 Բ. Գ. Ե. կամ Զ. կարգերէն ուզէ, պար-
 տաւոր է առջի կարգերուն փոխարէնն
 ալ վճարել:

ОТГОВОРНИКЪ М. СКОПОВЪ
 Печантица Взаимность — "Варна".